



The European Union  
for Georgia

ENPARD: Support to Agriculture  
and Rural Development



# Ախալքալაქის տեղական գარգացման ռազմավարություն 2018-2020

Փետրվար 2018

Ախալքալաქის տեղական գարգացման խումբ  
[www.akhalkalakilag.ge](http://www.akhalkalakilag.ge)



## **Բովանդակություն**

Ռեզյումե

1. Մեթոդոլոգիա – Մասնակցային պլանավորում եւ նպատակներ
  2. Տեղական զարգացման խումբ – LAG
  3. Ախալքալաքի Մունիցիպալիտետի LDS պրոֆիլ
    - 3.1. Շրջանի նկարագրություն
    - 3.2. Սոցիալտնտեսական պրոֆիլ
      - 3.2.1. Ժողովրդագրություն
      - 3.2. Բաղաք եւ գյուղեր
      - 3.2.3. Առողջապահություն
      - 3.2.4. Աշխատանք եւ եկամուտ
    - 3.3. Տեղական կառավարություն եւ Տեղական ինքնակառավարություն
    - 3.4. Ախալքալաքի Մունիցիպալիտետի հիմնական ծառայությունները եւ ծրագրերը
    - 3.5. Կրթություն, մշակույթ եւ սոցիալական ներգրավվածություն
      - 3.5.1. Կրթություն եւ որակավորում/ունկությունների զարգացում
      - 3.5.2. Բաղաքացիական ներգրավվածություն, գենդերային հավասարություն եւ սոցիալական ներգրավվածություն
      - 3.5.3. Սոցիալական եւ մշակութային միջավայր (միջոցներ, գործունեություններ եւ մշակութային ժառանգություն)
    - 3.6. Էներգետիկա եւ միջավայր
      - 3.6.1. Աշխարհագրական եւ եղանակային պայմաններ
      - 3.6.2. Վերականգնվող Էներգիան եւ եղանակի հարմարվողականությունը
      - 3.6.3. Ֆյուրա եւ ֆաուկա
    - 3.7. Բնական ռեսուրսներ
    - 3.8. Տեղական ենթակառուցվածք
    - 3.9. Տնտեսական զարգացում
      - 3.9.1. Տնտեսական գործունեության պրոֆիլ
      - 3.9.2. Գյուղատնտեսություն
      - 3.9.3. Չբուսաշրջություն եւ ռեկրեացիա
      - 3.9.4. Արտադրություն եւ վերամշակում
  4. Սեկտորային ամփոփում եւ ապագա զարգացման մարտահրավերներ
  5. Տեղական զարգացման ռազմավարություն - LDS
  6. LDS Գործողությունների ծրագիրը- միջամտության մատրից
  7. Դրամաշնորհային հայտի գործընթացը
- Հավելվածներ
- Հավելված 1: Ախալքալաքի LDS զարգացման նպատակով համայնքների խնդիրների եւ կարիքների հիմնական քննարկում
- Հավելված 2: LDS զարգացման գործընթացը
- Հավելված 3: LAG Սխեմա
- Հավելված 4: Դրամշնորհային ուղղեցույց
- Հավելված 5: Շահերի կոնֆլիկտի հռչակագիր
- Հավելված 6: Ախալքալաքի Մունիցիպալիտետի բնակչությունը, Էթնիկ եւ գենդերային կազմը ըստ վարչատարածքային միավորների
- Հավելված 7: Ախալքալաքի մունիցիպալիտետի գյուղատնտեսության պրոֆիլ
- Հավելված 8: Ախալքալաքի մունիցիպալիտետի հիմնական ծառայությունները եւ ծրագրերը

## **Ռեզյումե**

Ախալքալաքի Մունիցիպալիտետի տեղական զարգացման ռազմավարությունը՝ (LDS) արտացոլում է Եվրամիության՝ համայնքի վրա հիմնված տեղական

գարգացման (LEADER) մոտեցման, ժամանակակից սկզբունքները, որը աջակցում է շահագրգիռ կողմերի ցանցին, տեղական ներդրումների գնահատմանը եւ հաստատմանը: LDS-ն տեղական ռեսուրսների մոբիլիզացման եւ տեղական տնտեսական, մշակութային եւ բնապահպանման զարգացման նախագծերի աջակցման հզոր գործիք է, որը կիրառում է կառավարման՝ ներքեւից վերեւ մոտեցումը:

LDS-ի զարգացումը ֆինանսավորվում է Եվրամիության հասարակական գործերի ինստիտուտի՝ (GIPA) կողմից իրականացված նախագծի՝ ENPARD-ի «Գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը Ախալքալաքում» շրջանակներում: Նախագծի տեխնիկական աջակցությունը եւ գործընկերությունը ապահովում են արեւմտյան Կորկի զարգացման գործընկերության (Իռլանդիա) խորհրդատուները, Մերսիքորփսը եւ ELVA հասարակական ներգրավվածությունը:

LDS-ն մշակվել է խորհրդատվական գործընթացի եւ Ախալքալաքի մունիցիպալիտետի տարբեր սեկտորներում գործող տեղական բնակչության, համայնքների, կազմակերպությունների եւ մասնավոր անձանց լայն ներկայացուցիչների ներգրավվածությամբ: Ռազմավարության մշակման գործում մեծ դեր խաղաց Ախալքալաքի Տեղական զարգացման խումբը (LAG), որը կազմված է 30 անդամներից: LAG-ի կազմի մեջ են մտնում՝ մասնավոր եւ հանրային սեկտորի տարբեր ոլորտների ակտիվ անձիք, գյուղատնտեսության, փոքր եւ միջին բիզնեսի, կրթության, մշակույթի, սպորտի, շրջակա միջավայրի, պահմանվող տարածքների, տեղական կառավարության, պետական օրգանների եւ ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

LDS-ն արտացոլում է տեղական մարտահրավերները եւ ուշադրություն է դարձնում ապագա զարգացման հնարավորություններին, կոնկրետ որոշումներ ընդունելով եւ հատուկ սոցիալ-տնտեսական, մշակութային եւ բնապահպանության միջամտությունների միջոցով: Ախալքալաքի LDS-ի գլխավոր նպատակն է՝

***Կենսապայմանների բարելավում, տեղական տնտեսության  
դիվերսիֆիկացիա, տեղական բնակչության ինտեգրում եւ  
մունիցիպալիտետները վերածել ավելի լավ բնակավայրի***

Այդ նպատակներին հասնելու համար, LDS-ը ձեւակերպում է հետեւյալ հիմնական խնդիրները՝

- Տեղական եկամուտների աճ եւ տեղական տնտեսության կայուն զարգացման նպաստում:
- Սոցիալական ինտեգրման բարելավում կրթական, մշակութային, երիտասարդության եւ գենդերային հավասարության հարցերում:
- Տեղական զբոսաշրջության պոտենցիալի ընդլայնում, տեղական մշակույթի կոնսերվացում եւ զարգացում:
- Մունիցիպալիտետում Էկոլոգիական միջավայրի բարելավման եւ բնապահպանության պրակտիայի ներդրում:

LDS-ն իր նպատակներին հասնել եւ խնդիրները լուծել փորձում է տարբեր տնտեսական, սոցիալական, մշակութային եւ բնապահպանական նախաձեռնությունների միջոցով: Վերելում նշված նախագծի՝ ENPARD «Գյուղի

զարգացման նոր մոտեցման նպաստումը Ախալքալաքում» շրջանակներում հիմնադրամները հասանելի են այնպիսի նախագծերի աջակցման համար, որոնք համապատասխանում են LDS-ի սկզբունքներին: Նշված դրամաշնորհային միջոցների վերահսկողությունը կիրականացնի Ախալքալաքի LAG-ը, որը իրենից ներկայացնում է ֆինանսավորելիք նախագծերի ընտրման եւ գնահատման գլխավոր որոշում ընդունող օրգան: Մանրամասն տեղեկություն տեղական զարգացման խմբի եւ ENPARD նախագծի դրամաշնորհային բաղադրիչի մեխանիզմի մասին ներկայացված է այս ռազմավարության փաստաթղթում:

LDS հաստատված է Ախալքալաքի LAG-ի անդամների կողմից 2018 թվականի փետրվարի 15-ին:

### **1. Մեթոդոլոգիա – Մասնակցային պլանավորում եւ նպատակներ**

Տեղական զարգացման խումբը՝ (LAG), որպես տեղական համայնքների ներկայացուցիչների առաջնորդությամբ կայացած կազմակերպություն, մոնիցինգավիտետի ապագա զարգացման նպատակով, համայնքների մակարդակով բացահատեց տեղական մարտահրավերները, գաղափարները եւ դրանք ներկայացրեց Ախալքալաքի տեղական զարգացման ռազմավարության փաստաթղթում (LDS): Այս փաստաթուղթը հիմնվում է կառավարման ներքեւից-վերեւ ուղղված մոտեցմանը, որը նաեւ պարունակում է տարբեր շրջանային, ազգային եւ միջազգային կազմակերպությունների կողմից պատրաստած ռազմավարական հայցեկարգ, ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղությամբ: LDS-ը ընդգծում է գործընթացում հասանելիք հետեւյալ հիմնական խնդիրները՝

1. Տեղեկատվության որակի բարելավում, որը կիրառվում է գլխավոր մարտահրավերների եւ հնարավորությունների նույնականացման համար, SWOT վերլուծության, խնդիրների եւ ռազմավարական գործողության դիզայնը կազմելու ժամանակ:
2. Շահագրգռված կողմերի ներգրավվածության ապահովում (տեղական, շրջանային, ազգային եւ միջազգային մակարդակով), LDS-ի հանդեպ համասեփականություն եւ հաշվետվություն, համամասնակցության խթանում եւ իրագործման նպաստում:
3. Ախալքալաքի LAG-ի եւ Եվրամիության նախագծի՝ ENPARD-ի դերի մասին հասարակության իրազեկության բարձրացում եւ հետագա ներգրավվածության օպտիմալացում:
4. Պլանվորման գործընթացում համայնքների ներգրավվածությունը, ինչը ինքստիներյան հնարավորությունների զարգացման, սոցիալական կապիտալի եւ ունակությունների ամրապնդման միջոց է:
5. Տեղական եւ սեկտորային մակարդակով փոխգործակցության նպաստում վերլուծության որակի եւ խնդիրների լուծման բարելավման նպատակով, բազմաթիվ ձայների եւ ստեղծագործական մտածելակերպի խթանման ճանապարհով:

6. Նպատակների եւ գործողությունների դասակարգում ըստ առաջնահերթության ինտենսիվ եւ ներթափանց խորհրդատվությունների միջոցով:

LDS-ը մշակվել է ըստ ԵՄ կանոնակարգի [Common Provisions Regulation (EC) 1303/2013], ինտեգրված եւ մոլտի-սեկտորային զարգացման ռազմավարությունների ճանապարհով եւ գյուղի զարգացման Եվրոպայի ցանցի կողմից հաղորդած դիզայնի ու ներդրման ուղղեցույցային սկզբունքներով (2016թ. մայիս).

Համայնքի վրա հիմնված տեղական զարգացման ռազմավարության (LDS) զարգացման գործընթացը ներառում է հետեւյալ փուլերը:

1. *Ախալքալաքի LDS-ի զարգացման համար համայնքների խնդիրների եւ կարիքների ուսումնասիրության քաղային հետազոտության անցկացում* (հավելված 1). Հետազոտությունը անցկացվեց 2017 թվականի հուլիս ամսում: Ֆոկուս խմբերի հարցումների միջոցով հարցվեց 209 տեղական քաղաքացի: Բազային հետազոտությունը ներառում էր Ախալքալաքի Մունիցիպալիտետի 22 տարծքային միավորի տեղական բնակչության բոլոր խմբերը:

2. Հարցումների եւ խորհրդատվությունների անցկացում տեղական բիզնեսի հետ (10 հարցվող), տեղական ինքնակառավարության հետ (7 հարցվող), տարբեր ծառայությունների եւ ծրագրի առաքիչների հետ (10 հարցվող) եւ հասարակական սեկտորի ներկայացուցիչների հետ (5 հարցվող).

3. Գրասեղանային հետազոտության անցկացում՝ հիմնվելով երկրորդական աղբյուրների վրա: Տարածաշրջանային եւ մունիցիպալիտետի հետազոտությունը վերաբերվում էր՝ քաղաքականության փաստաթղթերին, զարգացման ռազմավարություններին, հետազոտական նյութերի, առկա եւ իրականացված նախագծերի/ծրագրերի, վիճակգրական տվյալների եւ հարցրերի հետ ծանոթանալուն: LDS-ի առաջնահերթությունների եւ նպատակների համադրության համար՝ տարծաշրջանի եւ ազգային ռազմավարության եւ քաղաքականության հետ, LDS-ի մշակման ժամանակ կիրառվեց հետեւյալ փաստաթղթերը՝

- *Գյուղատնտեսության զարգացման ռազմավարություն 2015- 2020*
- *Ձրոսաշրջության զարգացման ռազմավարություն 2014-2025*
- *Գյուղի զարգացման ռազմավարություն 2017-2020*
- *Երկրի կենսաբազմազանություն, ռազմավարություն եւ Վրաստանի գործողության պլան 2014-2020*
- *Սամցխե-Ջավախեթի շրջանային զարգացման ռազմավարություն 2014-2021*
- *Ախալքալաքի մունիցիպալիտետում ներդրումների ներգրավման հեռանկարներ, մշակված շրջանի ղեկավարի վարչակազմի կողմից:*
- 4. 14 առաջնային թեմայի վերաբերյալ թեմատիկ հետազոտության անցկացում եւ 4 ռազմավարական ուղղության մշակում LAG-ի ադամների կողմից (հոկտեմբեր, 2017) հավելված 2.

5. SWOT վերլուծության 4 ռազմավարական ուղղություններ (3-4 նոյեմբեր, 2017).

6. Ռազմավարական միջամտության սեմինարների անցակցում 4 ռազմավարական ուղղությամբ, որը հաղորդեց LDS-ի նպատակների, խնդիրների, արդյունքների եւ ցուցիչների արդյունքները (5 նոյեմբեր, 2017).
7. LAG-ի ուսումնական այց Իռլանդիա (18-25 նոյեմբեր, 2017).
8. LDS-ի կոնցեպտուալիզացիա (հունվար, 2018);
9. LDS-ի անդամների կողմից LAG-ի անդամների նշանակում (15 փետրվար, 2018).

## **2. Տեղական զարգացման խումբ – LAG**

Ախալքալաքի տեղական զարգացման խումբ – LAG-ը քաղաքացիական հարթակ է, որը բաղկացած է մասնավոր, հանրային եւ հանրային սեկտորի ներկայացուցիչներից եւ հիմնված է ինքնակամ անդամակցության վրա: LAG-ը հիմնվում է LEADER մոտեցման 7 հիմնական սկզբունքների վրա՝ զարգացման ռազմավարության մշակում տեղական համատեքստի հետ համատեղելով, որոշումների ընդունում ներքեւից վերեւ կառավարման սկզբունքով, ներգրավել մասնավոր սեփականատերին գործընթացի մեջ, ներդնել նորարարական գաղափարները, ինտեգրված բազմասեկտորային գործունեություն, կապերի հաստատում, համագործակցության նպատում:

LAG-ի պարտականությունները հետեւյալ խնդիրներին անդրադառնալն է

- ա) սահմանում է գյուղի առաջնահերթությունները մունիցիպալիտետի հնարավորությունների եւ մարտահրավերների վերլուծության հիման վրա: Տեղական համայնքի բնակչության հետ խորհրդատվության հետեւանքով կբացահայտվեն տեղական կարիքները եւ առկա տեղեկատվությունները, ազգային ռազմավարության հետ մեկտեղ, կիրառում է միջոցներ համայնքի վրա հիմնված տեղական զարգացման ռազմավարություն (LDS) ստեղծելու համար;
- բ) Ախալքալաքի համայնքների բնակչությանը հաղորդում է ամբողջական եւ համապարփակ տեղեկություն տեղական զարգացման ռազմավարության մասին, լայնորեն տարածում տեղեկատվություն հասարակության մեջ դրամաշնորհային հայտերի ներկայացման բոլոր ընթացքակարգերը եւ պարզաբանում այդ ընթացքակարգերը:
- գ) Ստեղծում է ենթանախագծերի քննարկման, գնահատման, եւ ընտրման ներթափանց եւ ոչ խտրական ընթացակարգ:
- դ) Ընդունում է եւ գնահատում ենթանախագծերը ըստ LDS-ի առաջնահերթությունների եւ չափորոշիչներն համապատասխան:
- ե) Ընտրում է հզոր ենթանախագծեր, սահմանում է ֆինանսավորման չափը եւ ներկայացնում հաշվետու օրգաններին;
- ը) LDS-ն, վերահսկում է ենթանախագծերը եւ գնահատում նրանց արդյունավետությունը ու օգուտը մունիցիպալիտետի համար:

LAG-ի անդամակցությունը, կազմը (Կազմակերպական կառուցվածքը), ընտրման գործընթացը, ռոտացիոն քաղաքականությունը, եւ այլ ինստիտուցիոնալ հարցերը կարգավորվում է LAG-ի կանոնակարգով (հավելված 3): Ըստ կանոնակարգի, LAG-ի կառավարումը իրագործում է նրա ղեկավարը, որը վերահսկում է LAG-ի գործունեությունը: Նրան օգնում են երկու փոխնախագահներ: Նախագահին եւ փոխնախագահներին ընտրում են LAG-ի անդամները: Նախագահը մասնավոր կամ քաղաքացիական ոլորտի ներկայացուցիչ է, մի փոխնախագահը՝ մասնավոր

կամ հանրային սեկտորից, երկրորդը՝ հանրային սեկտորից: Նախագահը ներկայացնում է LAG-ին երրորդ անձանց հետ հարաբերություններում, եւ նրա բացակայության դեպքում պարտականությունները կատարում է փոխնախագահը՝ մասնավոր կամ հանրային սեկտորից:

(PAC)-ը LAG-ի կազմի մեջ մտնող գլխավոր օրգան է, որն իրենից ներկայացնում է նախագծերի գնահատման կոմիտե եւ պատասխանատու է նախագծերի գնահատման եւ խորհրդատվության համար, արդյունքները հաղորդում է LAG-ի մնացած անդամներին նախագծի հետագա ֆինանսավորման նպատակով: PAC-ի անդամները ընտրվում են LAG-ի անդամներից: PAC-ի կազմը եւ իրավասությունը կարգավորվում է LAG-ի կանոնադրությամբ (հավելված 3): PAC-ը չի ընդունում վերջնական որոշում նախագծի հաստատման, մերժման եւ ֆինանսավորման մասին: Յուրաքանչյուր ներկայացված նախագծի համար PAC-ը ապահովում է նախագծերի գնահատականները եւ ներկայացնում հանձնարարականներ, իսկ վերջնական որոշումներ ընդունում են LAG-ի անդամները ձայների մեծամասնությամբ: Նախագծի կարիքներից ելնելով, նախագծի գնահատման գործընթացում LAG-ը հնարավոր է հրավիրել նաեւ արտաքին փորձագետներ: LEADER դրամաշնորհներ՝ դրամաշնորհային մրցույթի հայտարարումը, ենթանախագծերի ընտրումը (նախագծի գնահատումը եւ հաստատումը) կամ մերժումը, ֆինանսավորումը, վերահսկողությունը եւ գնահատման ընթացքակարգերը կարգավորվում է ըստ դրամաշնորհային ուղղեցույցի: (հավելված 4).

LAG-ի յուրաքանչյուր անդամ ստորագրում է շահերի կոնֆլիկտի հռչակագիրը (հավելված 5), որը ապահովում է ենթանախագծերի գնահատման, ընտրման եւ վերջնական որոշումների ընդունման գործընթացի պաշտպանումը LAG-ի յուրաքանչյուր անդամի անձնական շահի ազդեցությունից, հաշվի առնելով նրանց գործառնություններն ու պարտականությունները:

### **3. LDS-ի արել- Ախալքալաքի մոնիցինգի պալիտեի պրոֆիլ**

#### **3.1 Տարածաշրջանի նկարագրությունը**

##### ***Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան***

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանը գտնվում է Վրաստանի հարավ-արեւելքում: Նրա տարածքում է մտնում երեք պատմական պրովինցիա՝ Սամցխեն, Ջավախեթին եւ Թորին: Տարածաշրջանը սահմանակցում է հետեւյալ հինգ մարզերին՝ Աջարիային, Գուրիային, Իմերեթիին, Ծիդա Քարթլին եւ Քվեմո Քարթլին: Մարզի տարածքը 6,421 կմ<sup>2</sup> է:

Մարզը ունի հրամար աշխարհաքաղաքական դիրք: Նրան սահմանակից է Թուրքիան եւ Հայաստանը, ինչը այս հարեւան երկրների հետ ստեղծում է տնտեսական եւ մշակույթային հարաբերությունների հեռանկարային պայմաններ: Հենց այս մարզով կանցնի Բաքո-Թբիլիս-Ջեյհան նավթատարը, Տրանսկասպյան գազամուղը եւ Մարաբդա-Ախալքալաք-Ղարս երկաթուղային մայրուղին:



Մարզում կա վեց մունիցիպալիտետ՝ Ախալցխա, Ադիգենի, Ասպինձա, Բորջոմի, Նինոծմինդա եւ Ախալքալաք: Մարզային կենտրոնը Ախալցխան է, որտեղ գտնվում է մարզպետի վարչակազմը: Ճրջանում կա 353 բնակատեղի, նրանց թվում 5 քաղաք՝ Ախալքալաք, Ախալցխա, Բորջոմի, Վալե, Նինոծմինդա, Բակուրիանյան լեռնաշղթայի ճաղվերի, Ախալդաբա, Ադիգենի, Աբասթուլմանի, Ասպինձա եւ 254 գյուղ:



### **Ախալքալաքի մունիցիպալիտետ**

Ախալքալաքի մունիցիպալիտետը գտնվում է Ջավախքի հրաբխային բարձրավանդակում, ծովի մակարդակից 1500-3300մ բարձրության վրա: Այն սահմանակցում է 4 մունիցիպալիտետների հետ՝ Ասպինձային արեւմուտքից, Նինոծմինդային արեւելքից, Բորջոմիին հյուսիս-արեւմուտքից եւ Ճալկային կենտրոնական արեւելյան մասում: Մունիցիպալիտետի հարավային մասը ունի սահամն Թուրքիայի հետ: Ախալքալաք-Կարծախ սահմանային անցակետը 30 կմ-ով է հեռու քաղաքի կենտրոնից: Ախալքալաքի մունիցիպալիտետի տարածքը կազմում է 1,234.8 կմ<sup>2</sup>: Դա երկրի ամբողջ տարածքի 1.8%-ն է, իսկ Վրաստանի



Հարավային մասի 23.5%-ը: Ախալքալաքի մարզի մեծ մասը լեռնային է: Նրա մակերեսը համեմատաբար միանման է (ծովի մակարդակից 1600 մետր բարձրության վրա՝ հյուսիս-արեւմտյան մասում, իսկ հարավ արեւմտյան մասում, 2100 մետր):


Թբիլիսիից դեպի Ախալքալաք կարճ ճանապարհ է անցնում հարավ-արեւմուտքից՝ Կոջորիի եւ Շալկայի անցումով (182 կմ), ինչը հնարավորություն է տալիս հասնել Մունիցիպալիտետի կենտրոն 2.5-3 ժամում, սակայն ճանապարհային պայմանների եւ կլիմայական գործոնների պատճառով ճանապարհը քիչ է օգտագործվում: Թբիլիսիից մինչեւ Ախալքալաք գոյություն ունի նաեւ այլ ճանապարհ՝ Բորջոմիի, Ախալցխայի եւ Ասպինձայի անցումով (հեռավորությունը – 271կմ, ճանապարհի տեղողությունը՝ հինգից վեց ժամ): Հայաստանի սահմանային անցակետ հասնել հնարավոր է Նինոծմինդայի մունիցիպալիտետի ժդանովական գյուղից, որը գտնվում է Ախալքալաքից 42 կիլոմետր հեռավորության վրա: Դրանից բացի, այս ճանապարհը օգտագործվում է տրանզիտի համար դեպի Ռուսաստանի Դաշնություն:

Ախալքալաքի Մունիցիպալիտետը ներառում է 22 վարչական տարածքային միավորներ եւ քաղաք Ախալքալաքը, որը մունիցիպալիտետի վարչական կենտրոնն է, եւ որը հիմնել է վրաց ազգի թագավոր Քագրատ III-ը (X-XI դդ.)

### 3.2 Սոցիալ-տնտեսական պրոֆիլ

#### 3.2.1. Ժողովրդագրություն

2014 թվականի Սաքստատի տվյալներով, մունիցիպալիտետում ապրում էր 45 070 մարդ, մասնավորապես՝ ք. Ախալքալաքում - 8 295 (18.4%), գյուղերում-36 775 (81.6%)։ բնակչության մեծամասնությունը էթնիկ հայեր են (93,8%), 5,7%-ը կազմում են էթնիկ վարցիք, իսկ 0.5%-ը՝ այլ էթնիկ խմբեր՝ ռուսներ, հույներ եւ այլն։ Բնակչության մեծամասնությունը՝ էթնիկ հայերը պատկանում են առաքելական քրիստոնեական հավատքին, մնացած մասը ուղղափառ եկեղեցուն։ 2002 թվականին բնակչության խտությունը 49.4 մարդ/կմ<sup>2</sup> էր, ինչը միջինից բարձր ցուցանիշ է, սակայն նոր տվյալներով բնակչության խտությունը նվազեց (մինչեւ 36.5 մարդ կմ<sup>2</sup>)։



Սեզոնային միգրացիայի պատճառով, բնակչության քանակը փոխվում է եւ տատանվում։ Աշխատունակ բնակչության մոտ 20%-ը գարնանը լքում են

մունիցիպալիտետը եւ տուն վերադառնում ուշ աշնանը կամ ձմռանը: Մունիցիպալիտետի աշխատանքային միգրանտների ստույգ թվաքանակը հասանելի չէ: Միգրացիայի ինտենսիվությունը սահմանվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են աշխատանքի անցնելու սահմանափակ հնարավորությունները, գյուղատնտեսության վատ ինտեսիֆիկացումը եւ չգարգացած ենթակառուցվածքը: Համայնքի անդամների գնահատմամբ, միգրանտների 80% բանվորներ են: Միգրանտների մեծամասնությունը (երիտասարդները՝ ներառյալ միջին հասակի բնակչությունը) ունեն միջնակարգ կրթություն: Երիտասարդների համար գոյություն չունի այլ մասնագիտական հնարավորություններ, բացի գյուղատնտեսական սեկտորում գործի անցնելուց: Տարեց մարդիկ դժգոհում են, երիտասարդների անջատվածությունից համայնքի սոցիալ-տնտեսական գործունեությունից, ազարտային խաղերի ձգտումից, նրանց կողմից ժամանկ վատնելուց օնլայն զվարճանքի եւ անգործության վրա:

Բացի դրանից, մունիցիպալիտետում մշտական բնակչության քանակը սեզոնային միգրացիայի պատճառով տատանվում է, կա եւս բնակչության նվազեցման վտանգ: 2012 թվականին սաքստատի կողմից հաղորդած վիճակագրական տվյալներով, Ախալքալաքի Մունիցիպալիտետի բնակչությունը կազմում էր 64 900 մարդ, իսկ 2014 թվականին այս ցուցանիշը նվազեց մինչեւ 45 070, ինչը նշանակում է բնակչության նվազեցում 30%-ով: Ըստ *Ախալքալաքի LDS զարգացման համար համայնքների խնդիրների եւ կարիքների ուսումնասիրության բազային հետազոտությունների* (հավելված 1), համայնքներում հայտարարում են, որ անցած տարիների համեմատ, ընտանիքների քանակը նվազել է: Նրանց գնահատմամբ, տների մոտավորապես 20% լքված է եւ բնակչության քանակը 40% -ով նվազել է: Դա, հնարավոր է պայմանավորված լինի նրանով, որ արտասահման աշխատանքի գնացած էմիգրանտները (հիմնականում՝ Ռուսաստան, համեմատաբար քիչ քանակությամբ դեպի Հայաստան) ստանում են ռեզիդենտություն կամ քաղաքացիություն եւ էլ չեն վերադառնում Վրաստան: Ըստ 2017 թվականին FAO-ի կողմից անցկացված *գյուղատնտեսության ներդրումային հնարավորությունների եւ համապատասխան էքստենցիայի կարիքների գնահատման*, գյուղում ընտանիքի անդամների միջին քանակը կազմում է 4.7 մարդ (2.4 տղամար եւ 2.3 կին): Պարզվեց, որ գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավված ընտանիքների անդամների միայն 64%-ն է աշխատանքային տարիքի (միջին հաշվով, ընտանիքում-3 մարդ, այդտեղից - 1.6 տղամարդ, 1.4 -կին):

### **3.2.2 Քաղաք եւ գյուղեր**

Մունիցիպալիտետը ներառում է 22 վարչական տարածքային միավորներ՝ Ագավրեթ, Ալաստան, Արագվա, Բարալեթ, Վաչիան, Գոգաշեն, Կումուրդո, Դիլիսկա, Զակ, Քարցախ, Կարտիկամ, Կոթելիա, Կոճիո, Օկամ, Պտենա, Սուլդա, Տուրցխ, Խավեթ, Խանդո, Խոսպիո, Զունչխա, որոնք միավորվում են որպես 15 համյնքներ եւ 6 մեծ գյուղեր: Վարչական կենտրոնն հանդիսանում է ք. Ախալքալաքը: Ուրբանիզացման ցածր մակարդակի եւ բնակավայրերի համար նախատեսված անբավարար տարածքի պատճառով, մունիցիպալիտետի գյուղերը փոքր են եւ տարածված: Ըստ սաքստատում որոնած տվյալների, գյուղերի մեկ

երրորդը 200-ից ավել եւ 500-ից նվազ բնակիչ ունի, իսկ գյուղերի մեկ երրորդը 500-ից մինչեւ 1000 մարդ: Միայն մի գյուղի բնակչությունն է առավելագույնը՝ 2001-ից 3000-ի շրջանակներում: Ախալքալաքի Մունիցիպալիտետի վարչական տարածքային միավորների բնակչության քանակը մանրամասն ըստ էթնիկ եւ գենդերային մասնակցության (2014 թվականի տվյալներով) տեսնել՝ հավելված 6-ում:

Մունիցիպալիտետի գյուղերի մեծամասնությունը հիմնվել է (մոտավորապես 94%) 1830 թվականին, Էրզրումի (Թուրքիա) գյուղերից հայերի էմիգրացիայի հետեւանքով: Էթնիկ Վրացիները մեծամասնություն են կազմում 8 գյուղերում՝ Չունչխա, Պտենա, Խոսպիո, Կոթելիա, Օկամ, Ազմանա, Ապնիա, Գոգաշեն: Էթնիկ վրացիները կազմում են բնակչության կեսը Բարալեթիում եւ Մուրջախետում:

### • **Առողջապահություն**

Մունիցիպալիտետում ներկայացված են հետեւյալ առողջապահական օբյեկտները՝ Կենտրոնական բժշկական հիվանդանոցը՝ Էվեքս, Ախտորոշիչ / ամբուլատոր կլինիկա՝ HEMA; գյուղերում - 45 առաջնային առողջապահական կենտրոններ (գործում է միայն՝ 6-ը); 25 ատամնաբուժական կլինիկա եւ 2 արտակարգ օգնության անձնակազմ: Շատ դեպքերում, մունիցիպալիտետում հիվանդության տարածվածությունը գերազանցում է ազգային միջին ցուցանիշին, ուռուցքային, նեֆրոլոգիական, սիրտ-անոթային եւ Էնդոկրինոլոգիական հիվանդությունների համեմատաբար բարձր ցուցանիշով: Մունիցիպալիտետում հասանելի է առողջապահական ծրագրերը եւ պատավստումները, սակայն հիվանդները հազվադեպ են դիմում տեղական կլինիկաներին, բացի կլինիկական նշաններով ի հայտ եկած դեպքերի: Ըստ հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի կողմից հաղորդած տեղեկության, առողջապահական օբյեկտներում հիվանդների դիմումների քանակը ավելի քիչ է ազգային միջին ցուցանիշից: Տեղական առողջապահության կենտրոնի տեղեկությամբ, համայնքներում բժշկական կլինիկաները օպտիմալորեն չեն գործում, տեղական կլինիկաների ենթակառուցվածքը ունի կահույքի եւ սարքավորումների դեֆիցիտ, իսկ առկա սարքավորումները ունեն վերականգման եւ թարմացման կարիք: Մունիցիպալիտետում գոյություն ունի բժիշկների եւ բուժքույրերի պակաս - յուրաքանչյուր 1000 հոգուն համապատասխանում է 2.1 բժշկական անձնակազմ (երկրի միջին ցուցանիշն է 3.6 անձնակազմ): Շատ դեպքերում, մունիցիպալիտետում նկատվում է բարձր որակաորման/պրոֆեսիոնալ բժիշկների պակաս:


### • **Աշխատանք եւ եկամուտ**

2017 թվականի օգոստոսի տվյալներով, մունիցիպալիտետում բնակվում է աշխատանքային տարիքի 34,100 մարդ, իսկ կենսաթոշակային՝ 72561 մունիցիպալիտետներում ընտանիքների եկամուտը մասնավորապես կախված է կենտրոնական բյուջեից ստացած սոցիալական օգնությունից (*Սննդամթերքի անվտանգության եւ սնունդի մարտահրավերները Վրաստանի բարձրավանդակներում, Թբիլիսի, 2016, Օքսֆամ*): Ըստ բարձրլեռնային մարզերի զարգացման օրենքի, մունիցիպալիտետի ամբողջ տարածքը ունի բարձրլեռնային

մարզի կարգավիճակ, ինչը տալիս է որշակի մաքսային արտոնություններ եւ սոցիալական օգուտ: Միջին հաշվով, ակտիվ եկամուտ բերողները ընտանիքում աշխատանքային տարիք ունեցող մարդկանց 27%-ն են, որոնցից 39%-ը տղամարդ է եւ 12% - կին: Այս տեղեկությունը ներառում է միայն գյուղատնտեսության արտադրության մեջ ներգրավված ընտանիքները (թոշակներից, նպաստներից եւ այլ եկամուտներից բացի):

Աշխատանքային միգրանտների համարյա 90%-ը ունի Ախալքալաքում բնակվող ընտանիքի անդամներ եւ բարեկամներ, ովքեր ստանում են դրամական փոխանցումներ նրանցից: Փոխանցումները ներկայիս դրությամբ շրջանի եկամուտի երկրորդ խոշոր աղբյուրներից է: Ախալքալաքում բնակվող ընտանիքների մոտավորապես 23.9% ստանում է էմիգրանտների կամ արտասահմանում աշխատող սեզոնային միգրանտների ֆինանսական աջակցությունը: Կենսաթոշակները մոնիցինգալիտետի երրորդ նշանավոր եկամուտներից մեկն է, որտեղ բնակվում են փոքր կենսաթոշակ ստացող ընտանիքների 33.6%: Կառավարության կողմից զբաղվածների եկամուտները կազմում է մոնիցինգալիտետի ընտանիքների 17.8%-ի եկամուտը: Մնացած եկամուտների մասը ստանում են միջին գյուղատնտեսական գործունեությունից եւ մասնավոր սեկտորում աշխատելուց: Սամցխե-Ջավախեթի գործազրկության մակարդակը 2016 թվականին Գուրիայի եւ Մցխեթա-Մթիանեթի հետ մեկտեղ կազմում էր 4.1%, ինչը շատ ցածր է երկրի միջին ցուցանիշից՝ (11.8%): Դրա պատճառը այն է, որ շրջանի բնակչության մեծ մասը աշխատում է գյուղատնտեսության սեկտորում եւ վրաց օրենսդրությամբ համարվում են «ինքնազբաղված»:

Ըստ FAO-ի կողմից անցկացված հետազոտությունների պարզվեց, որ գյուղատնտեսության մեջ ներգրավված ընտանիքների 53%-ի ամսական եկամուտը բոլոր աղբյուրներից 100-ից 500 լարի է կազմում, ինչը քիչ է երկրում գյուղի ընտանիքի միջին եկամուտից (669.9 լարի ամսական) (սաքստատ 2016): Ընտանիքների միայն 6%-ի եկամուտն է գերազանցում երկրի գյուղում ապրող բնակիչների միջին եկամուտը: Այս ցուցանիշը պատկերված է ներքեւում բերված գրաֆիկով:



Ըստ სოცს հետազոտությունների, ընտանիքների եկամուտների մասնաբաժնի առումով (%-ով), հարցվողների 32%-ը չի ստանում եկամուտ անասնապահությունից: Նրանց ամբողջ եկամուտի 60%-ը ստեղծում է գյուղատնտեսական բերքը՝ ընտանիքների 13%-համար, անասնապահությունը՝ ընտանիքների 11% համար; եկամուտի 40-ից մինչև 60%-ը գալիս է գյուղատնտեսական բարիքից ընտանիքների 30%-համար եւ անասնապահությունից՝ ընտանիքների 9%-ի դեպքում; եկամուտի 20%-ից մինչև 40%- գալիս է գյուղատնտեսական բարիքից ընտանիքների 41%-ի համար եւ անասնապահությունից - 26%-ի համար ; եկամուտի 0-ից մինչև 20%-ի գալիս է գյուղատնտեսական բարիքից ընտանիքների 16%-ի եւ անասնապահությունից ընտանիքների 22%-ի համար: Թվերով տրված է ներքեւում պատկերված աղյուսակում:



Ախալքալաքի մունիցիպալիտետում առկա հիմնական ծառայությունների եւ ծրագրերի մասին մանրամասն տեղեկություն կարող եք տեսնել հավաելված 9-ում:

### **3.5 Կրթություն, մշակույթ եւ սոցիալական ներգրավվածություն**

#### **3.5.1 Կրթություն եւ որակավորում/ուսկաությունների զարգացում**

Մունիցիպալիտետի կրթության համակարգում գոյություն ունի 65 հանրային դպրոց, դրանցից 50-ը միջնակարգ եւ 15-ը բազային: Վերջին տասնամյակների ընթացքում կառուցվեց 6 դպրոց եւ ամբողջությամբ վերանորոգվեց 5-ը, միայն մի դպրոցը չունի սեփական շենք: Վերանորոգված դպրոցները կահավորված է նոր դպրոցական կահույքով: Տարածաշրջանում մասամբ վերականգնվել է 60 գործող դպրոց: Մնացած դպրոցները ունեն վերանորոգման կարիք: Ախալքալաքի Մունիցիպալիտետի 65 դպրոցից 33% բավարարում է ուսումնական պայմանները, այստեղ մտնում է սպորտային դահլիճները, դասասենյակներ, գրասենյակները եւ լաբարատորիաները: Այս դպրոցները կառուցվել են 1970-1980 եւ 2004-2005 թվականներին: 1897-1960 թվականներին կառուցված դպրոցների 67 տոկոսը չի համապատասխանում ուսումնական չափանիշներին: Կան գյուղեր, որոնք մնացել են առանց դպրոցի, սակայն փոխարենը, կրթական նպատակների համար հատկացվել եւ վերակառուցվել է ալտերնատիվ համայնքային ակումբները եւ շենքերը: Խնդիրներ կան նաեւ Էլեկտրաէներգիայի մատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, զուգարանների եւ այլ ենթակառուցվածքային հարցերում: Պետք է նշվի որ տարիների ընթացքում կտրուկ նվազեց աշակերտների քանակը, սակայն ավելացավ ուսուցչների քանակը (2017 թվականին զբաղված էին 1414 ուսուցիչ, 2016-ին՝ 7232 աշակերտ, երբ 2001 թվականին կար 1200 ուսուցիչ եւ 12360 աշակերտ): Միջնակարգ դպրոցը ավարտում են միջնակարգ դպրոցի աշակերտների մոտավորապես 80%-ը: Դպրոցի ուսուցիչները ունեն թրեյնինգերի անցկացման կարիք՝ մանկավարժության մեջ եւ որակավորման բարձրացման կարիք մասնագիտական աճի համար: Ավարտականները վատ են տիրապետում լեզուներին, հատկապես՝ վրացերեն եւ անգլերեն լեզուներին:

Հարկավոր է բարելավել վրացերենի եւ անգլերեն լեզուների դասընթացների քանակը եւ որակը, վատ է ուսուցանվում գիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական ակադեմիական առարկաները, հատկապես՝ ֆիզիկան, քիմիան, մաթեմատիկան եւ այլն: Այս ամենը պայմանավորված է ուսուցիչների պակասից եւ նրանց ցածր որակաորումից: Դպրոցները պահանջում են գրադարաններ եւ կրթական-ուսումնական կահավորանք: Կրթության նախարարությունը ապահովում է տարբեր գյուղերից աշակերտների փոխադրումը դպրոց: Սակայն, այս ծառայության որակը եւ անվտանգության չափանիշները բարելավման կարիք ունի: Հայերեն լեզվով ներկայացված կրթական ծրագրերը չի համապատասխանում վրացերեն լեզվի ազգային ծրագրին, ինչը առաջացնում է խնդիրներ պետական քննությունների ժամանակ:

Տրածաշրջանում գոյություն ունի բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանը եւ նրա մասնաճյուղերը Ախալքալաքիում եւ Ախալցխայում: Համալսարանն ունի հետեւյալ ֆակուլտետները՝ Կրթության, հումանիտար եւ հասարակական

գիտությունների ֆակուլտետ, բիզնեսի կառավարման ֆակուլտետ, իրավագիտության ֆակուլտետ, ճարտարագիտական, գյուղատնտեսական եւ բնական գիտությունների ֆակուլտետ: Տարբեր ազգերի ուսանողները սովորում են տնտեսագիտություն, մանկավարժություն, բանասիրություն եւ օտար լեզուներ: Ըստ տեղական բնակչությունում անցկացված գնահատման, միջնակարգ դպրոցի ավարտականների 40% ընդունվում են բարձրագույն հաստատություն: Ուսանողները սովորում են Ախալքալաքի, Երեւանի եւ Թբիլիսիիս համալսարաններում: Սակայն միտումները փոխվում են վրացալեզու համալսարաններում ընդունվելու ցանկացողների քանակը ավելանում է: 2017 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններում դիմողների քանակը եռապատկվեց, 500-ը դիմեց Վրաստանի բարձրագույն հաստատություններին, 100-ը՝ արտասահմանյան ուսումնական հաստատություններին:

Ֆերմերները՝ հատկապես երիտասարդները, վատ են հասակնում ագրոբիզնեսի կառավարումը եւ ժամանակակից գյուղատնտեսությունը: Նրանք իրենց գիտելիքները ինքնակրթությամբ եւ գործնական փորձի միջոցով են ձեռք բերում: Չնայած անհրաժեշտությանը տեղական մակարդակով անհասանելի է մասնագիտական-կրթական եւ ուսումնական ծրագրերը ագրոնոմիայի, անասնապահության, մեխանիկացման, հաշվառման, անասնաբուժական, եռակցման եւ ատաղձագործության, ագրո-բիզնեսի կառավարման, հաշվապահական հաշվառման, վաճառքի, մարքեթինգի եւ այլ ոլորտներում: Տեղական ֆերմերների եւ ձեռնարկատերերի մոտ շատ ցածր է իրազեկությունը գյուղատնտեսակն կոոպերատիվի օգուտի հետ կապված, ինչը նշանակում է, որ նրանց պետք է գործնական մոտեցում եւ թրեյնինգներ, որը ցույց կտա մեթոդների, կառույցների, մեխանիզմների, գործիքների առավելություններն ու համագործակցության անհրաժեշտությունը: Ֆերմերները չունեն փորձ, ունակություններ եւ գիտելիք կոոպերացիայի եւ կառավարման, հաշվապահության, վաճառքի, կազմակերպչական եւ այլ ոլորտներում: Ընդհանուր առմամբ, տարբեր ոլորտներում նկատվում է բավարար իրավասության բացակայություն, սակայն սա հիմնականում պայմանավորված է աշխատանքային շուկայից եւ ջրջանի ու մուկիցիպալիտետի վատ տնտեսական գործունեությամբ:

### ***3.5.2 Քաղաքացիական ներգրավվածություն, գենդերային հավասարություն եւ սոցիալական ներառում***

Ախալքալաքի մունիցիպալիտետում գոյություն ունի մի քանի ոչ պետական կազմակերպություններ, որոնք աշխատում են բիզնեսի, տնտեսության եւ գյուղատնտեսության զարգացման համար, գործում է հունական համայնք, մեդիա կազմակերպություններ, կանանց եւ երիտասարդական կազմակերպություններ; զբոսաշրջության եւ մասնագիտական հմտությունների զարգացման կազմակերպություններ եւ այլն: Նրանց կարծիքով, նրանք չունեն տեղեկություն մունիցիպալիտետում հասանելի ծրագրերի եւ դոնորների կողմից ֆինանսավորված նախագծերի մասին: Կազմակերպությունների միջեւ



համադրումը նվազ արդյունավետ է: Տեղական իշխանությունների հետ փոխգործակցությունը եւ համագործակցությունը անարդյունավետ է: Նրանց հնարավորությունները եւ կայունության մեխանիզմները թույլ են, քանի որ նրանք գտնվում են առավել մրցակցային միջավայրում առաջատար ոչ պետական կազմակերպությունների հետ: Այդ պատճառով, նրանց մեծամասնությունը ֆինանսապես չեն կարող հասնել գրասենյակային տարածքի, տեխնիկայի եւ չեն կարող իրագործել պարբերական գործունեություն: Բացի դրանից, գոյություն ունի որշ մասնագիտությունների օր.՝ հաշվապահական հաշվառման եւ ֆինանսների մասնագետների մեծ կարիք: Չնայած նրան, որ վրաց լեզվի դասընթացները հասանելի են մի քանի միջոցներով, բնակչություն մեջ կա վրացերեն լեզվի իմացության խնդիր, սակայն իրավիճակը բարելավվում է: Ինչպես վերելում նշեցինք, սոցիալական ինտեգրման խնդիրը հատվում է կրթության հետ, իհարկե, լեզվի խնդիրը ստեղծում է հաղորդակցման խոչընդոտներ: Դրանից ելնելով, էթնիկ փոքրամասնությունների սոցիալական ինտեգրման նպաստման համար առկա է վրացերեն լեզվի ուսուցման անհրաժեշտությունը:

Տնային գործերը՝ տան/բակի խնամքը, սնունդի պատրաստումը, լվացքը եւ այլն կատարում են կանայք, տնից դուրս աշխատելը տղամարդու գործն է համարվում: Չնայած նրան, որ ծանր ֆիզիկական աշխատանք տղամարդիկ են անում, նաեւ պահանջվում է կանանց աշխատանքների մեծ ջանքեր է բերքահավաքում եւ անասնապահությունում: Նշանավոր որոշումները հիմնականում տղամարդիկ են ընդունում, կանաց գործը սովորաբար ամենօրյա որոշումներ ընդունելն է, օրինակ՝ սննդամթերքի պատրաստում եւ երխաների խնամքը: Բացի դրանից, ընտանիքի բյուջեով հիմնական ապրանքի գնումները կատարում են կանայք: Սակայն միեւնույնն է «ընտանիքի ղեկավարի» կարգավիճակը պատկանում է տղամարդուն: Ի վերջո, գենդերային անհավասարակշռությունը երեւում է տարբեր արժեքների շղթայի գործընթացում, թեեւ նկատվում է կանանց դերի աճի պոտենցիալ:

### **3.5.3 Սոցիալական եւ մշակութային միջավայր (միջոցներ, գործունեություններ եւ մշակութային ժառանգություն)**

Ախալքալաքի մունիցիպալիտետում կան հնագույն մշակութի (մ.թ.ա. II հազարամյակի) հուշարձաններ, որոնք ներառում են միջնադարյան տաճարներ, բնակավայրեր եւ նախաքրիստոնեական ցիկլոպ կառույցները, ինչպիսիք են Աբուլի բերդ-ամրոցը եւ բնակավայրը, Սամսարի գմբեթավոր եկեղեցին եւ վանական համալիրը, Կումուրդոի գմբեթավոր տաճարը, Քվարշի եւ Կիլդայի բնակավայրը եւ Տաճարները, Վարդի ամրոցի բնակավայրը, Բարալեթիի եկեղեցին, Սիրգոի եկեղեցին, Մեղրեկիի վանքի ավերակները եւ ցիկլոպայն դարպասը, Դրթիլայի եկեղեցին, Կոճիոի, Ագավրեթի, Բուռնաշեթի, Գրիայի բնակավայրի, գյուղերի եւ ցիկլոպային Բերդ-ամրոցների ավերակները:

Ախալքալաքում առկա մունիցիպալիտետի մշակութի եւ կենտրոնական գրադարանի տունը երկու հարկանի շենք է, որի ընդհանուր տարածքն է 4398 մ2, այն ունի մեծ դահլիճ, 25 սենյակ եւ 8 գրասենյակ: Ծենքի կենտրոնական ջեռուցման վերանորոգումը ավարտվեց 2017 թվականին: Մունիցիպալիտետում էլ

չի գործում կինոթատրոնը: Հավելյալ ֆինանսավորման կարիք ունի տեղական թանգարանը, որին ֆինանսավորում է մունիցիպալիտետը: Պահանջը զվարճանքի հանդեպ բարձրանում է բնակչության եկամուտների բարձրացման հետ մեկտեղ: Մշակույթի եւ արվեստի դպրոցը մի հարկանի շենք է, 384 մ2 տարածքով: Այն ունի 5 դասասենյակ եւ մի գրասենյակ: Երաժշտական դպրոցը մի հարկանի շենք է 501մ2 տարածքով: Այն ունի 15 դասասենյակ եւ 2 գրասենյակ: Ախալքալաքում կա հին կենտրոնական մարզադաշտ եւ 3 մինի մարզադաշտ, որտեղ պարբերաբար են անցկացվում սպորտային խաղեր:

Գյուղերում կա 34 ակումբ եւ 16 գրադարան: Նշված մշակութային օբյեկտները կառուցվեց 1970-80 թվականներին, որոնք այսօր ունեն պատշաճ խնամքի կարիք: Գրադարանների մեծամասնությունը գրադարանավարների տներում է տեղակայված, քանի որ դրանք չունեն սեփական շենքեր: Տեղական նախաձեռնական խմբի կողմից Ալաստան գյուղի դպրոցում կառուցվեց թանգարան: Գրեթե բոլոր թեմերում գոյություն ունի հասարակական միջոցառումների անցկացման օբյեկտներ, որոնք հիմնականում կառուցվել եւ վերանորոգվել են համայնքի գումարներով եւ համամասնակցությամբ եւ նրանց օգտագործումը անվճար է:

### **3.6 Էներգիա եւ կլիմայական պայմաններ**

#### **3.6.1 Աշխարհագրական եւ կլիմայական պայմաններ**

Տրված տարածաշրջանը գտնվում է բարձրլեռնային բարձրավանդակի վրա եւ շրջապատված է ժայռերով, որոնք նշանավոր կլիմայական խոչնդոտներ են իրենցից ներկայացնում (հատկապես Էրուշեթի եւ Սամսարի լեռնաշղթան): Ռելիեֆի տեսակները նպաստում են կասեցնել օդային զանգվածները: Հետեւաբար ձմեռը ավելի չորային եւ ցուրտ է, գարունը՝ կարճ եւ ավելի տաք, քանց Կովկասում նույն բարձրության վրա գտնվող բարձրլեռնային շրջանում: Չնայած ջերմաստիճանի սեզոնային տատանումների, ցերեկվա եւ գիշերվա ջերմաստիճանների միջեւ տարբերությունը նկատելի է: Այն ստեղծում է Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում առկա մայրցամաքային կլիման: Նրան շրջապատում են Թրալեթի, Սամսար-Աբուլ, Ջավախեթի եւ Նիալայի ծոցի եւ վերին Քուռի հովիտները: (աամենաբարձր գագաթն է Աբուլը՝ 3304մ): Գյուղերի մեծամասնությունը գտնվում են ծովի մակարդակից 1700-2000 մետր բարձրության վրա: Ստորին հարթավայրերը նպաստում է աճեցնել այնպիսի գյուղատնտեսական ապրանք, ինչպիսիք են կարտոֆիլը եւ այլ կուլտուրաներ: Բարձրության վրա գտնվող հարթ վայրերը Ալայան մարզագետիններն են եւ օգտագործվում են որպես ընտանի կենդանիների արոտավայրեր: Աստեղ չկան բնական անտառներ եւ բարձր ծառեր/բույսեր: Սակայն կան արհեստական փշատերեւ անտառներ (տնկվել են 1950-1960 թվականներին):

Ջավախեթիում թույլ են մթնոլորտային գործընթացների ազդեցությունները, որոնք ամբողջ Վրաստանի մաշտաբով ակտիվ են: Արեւմուտքից կամ արեւելքից օդային զանգվածների հոսքը չի առաջացնում նշանավոր փոփոխություններ: Այդ պատճառով Ջավախեթիում տեղումների քանակը (միջին տարեկան 550 միլիմետր) զգալիորեն ցածր է, Վրաստանի այլ կողմեր համեմատ: Տարեկան միջին ջերմաստիճանը հասնում է 2.8C°-ի: Պետք է նշել, որ ամռանը բարձր ճառագայթման պատճառով միջին ջերմաստիճանը երբեմն հասնում է 14C°-ի, տարածաշրջանի կենտրոնական եւ բաց մասերում՝ 24C°-ի: Արեւի լույսի

տեւողությունը այստեղ ավելի բարձր է եւ տարածքի հիմնական մասում գերազանցում է 2500 ժամը: Ձմռանը բացարձակ նվազագույն ջերմաստիճանը նվազում է մինչեւ 41C° (հատկապես հարավային մասում), ինչը Վրաստանում ամենացածր ցուցանիշներից մեկն է: Տարեկան առանց սառնամանիքի օրերի միջին քանակը 100-103 է: Ընդհանուր առմամբ, մոնիցիպալիտետում գերակշռում են հարավ-առեւելյան եւ հյուսիս-արեւմտյան քամիները: Ձմռանը գերիշխում են արավ-արեւելյան քամիները, գարնանը հյուսիս-արեւելյան: Ձմռանը քամու միջին արագությունն է 3-4 մետր վայրկյանում, ինչը շատ բարձր ցուցանիշ է: Ամռանը քամու արգությունը (2-3 մետր վարկյանում) նեկտար (մեղվապահություն) արտադրելու համար բարենպաստ գործոնի ցուցանիշ է:

Ըստ կլիմայական տվյալների, 160 օր է պահանջվում տաքանալու եւ 55 օր հովացման համար. Այս սպասելի է կլիմայի փոփոխության պատճառով: Էներգիայի պահանջը գրեթե ամբողջությամբ բավարարում է ներմուծումը: (97%). Պահանջի միայն 3%-ն է բավարարում փայտի օգտագործումը: Ախալքալաքի մոնիցիպալիտետի տարածքին բնորոշ է ուժգին քամիներ, հորդ անձրեւներ եւ կարկուտ: Մոնիցիպալիտետի տարածքը համարվում է բարձր ռիսկային գոտի: Վերջին տասնամյակում բնական աղետները վտանգ են սպառնում բնական միջավայրին եւ գյուղատնտեսական տարածքներին: Ուժեղ անձրեւները եւ կարկուտը վնասել են գյուղատնտեսական հողերը եւ բնակավայրերը: Վերջին 10 տարվա ընթացքում 10,000 հեկտար հողամաս եւ 150 ընտանիք: Ըստ տեղական իշխանության տեղեկության, բնական աղետներով հասցրած վնասի չափը կազմում է մոտավորապես 5 միլիոն լարի:

### ***3.6.2 Վերականգնվող Էներգիան եւ կլիմայի հարմարվողականությունը***

2014 թվականի մայիսի 16-ին, Վրաստանի համատեղ ներդրումային հիմնադրամը՝ ԲԸ «Կավկազուս Էներջի Էնդ ինփրասթրաքչս»-ից (CEI) 100% սեփականության իրավունքով գնեց Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի Ախալքխայի մոնիցիպալիտետում գտնվող Բուռնի հիդրոէլեկտրոկայանի նախագիծը: Նախագծի ամբողջ ներդրումային արժողությունը կազմում է 131 մլն. ԱՄՆ դոլար: Նրա նպատակն է կառուցել 53 մեգավատ հզորությանը հիդրոէլեկտրոկայան եւ արտադրել տարեկան 251.5 մեգավատ Էներգիա: Մտկավրի ՅԷԿ-ի կողմից արտադրած ամբողջ հզորությունը կսպառվի երկրի ներսում:

Մոնիցիպալիտետում կլիմայի ադապտացման հարցերի իրազեկության մակարդակը ոչ պատշաճ է: Չնայած նրան, որ տեղական մակարդակով կլիմայի փոփոխության ռիսկը համարվում է զգալի, չի ընթանում դիսկուսիաներ այն ազդեցությունների եւ պոտենցիալ արդյունքների վերաբերյալ, որն ազդում է տնտեսության եւ բնակչության բարեկցության վրա: Չի աշխատում համապատասխան կառույց, որը կոնկրետ հարցերի լուծման համար կանցկացներ համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ բնական աղետներից խուսափելու համար: Որպես կանոն, արձագանքում են միայն բնական աղետից հետո:

### ***3.6.3 Ֆլորա եւ ֆաունա***

Մուկիցիպալիտետը աչքի է ընկնում հատուկ աշխարհագրական հատկանիշներով: Տարածաշրջանի մեծ մասը առանց անատռի է: Այն ծածկված է լեռնային եւ բուսական բույսերով: Լեռների մարգագետիններին գերակայում են խայտաբղետ խոտաբույսային՝ հատիկավոր տեսակները: Լճերի եւ ճահիճների շուրջը մեծ մասամբ տարածված են ջրային եւ ճահճային բույսերը: Ենթալայան եւ ալպյան մարգագետինները տարածված են 2200 մետր բարձրությունից վեր:

Ենթալայան գոտուն (2050-2400 մ) բնորոշ է բարձր խոտաբույսային, թփուտային եւ պոլի-դոմինանտային բույսեր: Սուբնիվալ բույսերը լավ են ներկայացված ալպյան գոտիներում (ծովի մակարդակից 2600-2800 մետր բարձրության վրա):

Սամսարի լեռնաշղթայի սուբնիվալ գոտում 62 տեսակի բույս է հաշվառված, այդ թվում 3-ը՝ տեղական եւ 14-ը՝ Կովկասյան Էնդեմիկ տեսակներից, մյուս տեսակները տարածված են հարավային Կովկասում եւ Փոքր Ասիայում: Ախալքալաքի մուկիցիպալիտետում ֆլորան եւ ֆաունան բազմաբղետ է եւ ներկայացված է տարբեր տեսակներով:

Տարածքի լանդշաֆտը ստեղծում է հետեւյալ տեսակի բույսերը՝

- Տափաստաններ (հացահատիկավոր խոտաբույսերի տափաստաններ, դաշտային շյուղախոտ, փետրախոտ, բոշխ);
- Սարվանդներ; Ենթալայան եւ ալպյան մարգագետիններ;
- Էնդեմիկ եւ ժայռային բույսերի սուբնիվալ գոտու ֆրագմենտներ:
- Գերխոնավ բուսեր բորեալ ֆլորայի տեսակներով, որը համընկնում է չորորդական ժամանակաշրջանի սառցապատման տարիներին:
- Կեչագգիների եւ սոճենու տեսակները:

Ջավախեթիում ենթալայան անտառները գտնվում են ծովի մակարդակից 1800-2100 մ. բարձրության վրա, Կարծախի լճի արեւելյան ափին, Չիլդիի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Այստեղ հանդիպում ենք հին անտառի մնացած մասին կեչիի եւ բարդու ծառերով: Բարդիները ավելի մեծ տարածք են զբաղեցնում քանց կեչիները: Լճերի շրջակա տարածքներում տարածված են ամառային արոտավայրերը, որոնք ծածկված են գերիշխող հացահատիկային բույսերով:

### 3.7 Բնական ռեսուրսներ

#### Յոդ

Չարգացման պոտենցիալը զգալիորեն է կախված մուկիցիպալիտետի տեղեկագրությունից, բնական ռեսուրսների եւ հողօգտագործման հնարավորություններից: Գյուղատնտեսությունը ամենանշանավոր գործունեությունն է, որը ազդում է կենսաբազմազանության եւ բնապաշտպանության որակի այլ ասպեկտների վրա: Գյուղատնտեսությունը ունի ինչպես՝ դրական, այնպես էլ՝ բացասական արդյունք, քանի որ Ախալքալաքի Մուկիցիպալիտետի ամբողջ տարածքի 77% օգտագործվում է գյուղատնտեսական գործունեության համար: Սա մատնանշում է այն բանի մասին, որ հողը համեմատաբար ինտենսիվ է օգտագործվում, ինչը բացասապես է ազդում միջավայրի բնական վերականգման վրա: Մուկիցիպալիտետի հողերի մոտավորապես 0.7% բնակելի տան/ տնամերձհողամասեր են: Մանրամասն տեղեկությունը տեսնել գյուղատնտեսական հողերի բաշխման մասին հավելված 7-ում:

Ոչ գյուղատնտեսական հողերը կազմում են 27,792 հա, ինչը կազմում է մուկիցիպալիտետի ամբողջ տարածքի 23%-ը: Անտառային ռեսուրսները սակավ է

եւ զբաղեցնում է միայն 5.6% (6900 հա): Ախալքալաքի մունիցիպալիտետում պահպանվող տարածքների ամբողջ տարածքը կազմում է 13,474 հեկտար, ինչը ներկայացնում է ամբողջ մունիցիպալիտետի 10.9%-ը: Ամբողջ տարածքում սահմանված է սահմանափակում ուղղված ֆերմերային տնտեսության պլանավորման եւ զարգացման ընդեմ: Բիոբազմազանության պահպանման եւ խթանման նպատակով իրականացվում է հանգստի եւ ռեկրեացիոն գոտիների կազմակերպում:

### ***Անտառային ռեսուրսներ***

Անտառները մունիցիպալիտետի տարածքում զբաղեցնում են 6 970 հեկտար տարածք, որտեղից 840 հա լայնատերեւ, իսկ 6 130 հա՝ փշատերեւ անտառներ են: Ախալքալաքի մունիցիպալիտետը աչքի է ընկնում սակավ անտառի տարածքով: Տարածքի մեծ մասը ծածկված է լեռնային եւ դաշտային բույսերով: Սարերի հովտում հիմնականում գերակշռում են հացահատիկային բույսերը: Ջրային բույսերը հիմնականում տարածվում են լճերի եւ ճահիճների շուրջը: Ենթալայան եւ ալպյան մարգագետինները գտնվում են ծովի մակարդակից 2200 մետր բարձրության վրա: Ենթալայան գոտին (2050-2400 մ) բնորոշվում է բարձրորակ բույսերով, թփուտներով եւ ենթալայան խոտաբույսերով: Սուբինվալ բույսերի տեսակները լավ են ներկայացված Մեծ Աբուլի եւ Սամսարի լեռներում, որտեղ 62 տեսակի բույս է հաշվառված:

Ախալքալաքում չկա անտառային տնտեսություն: Անտառի ամկա տարածքը ստացել կոնսերվացիոն եւ ռեկրեացիոն կարգավիճակ:

### ***Ջրային ռեսուրսներ***

Ախալքալաքի մունիցիպալիտետը ունի բավարար խմելու եւ ոռոգման ջրային ռեսուրսներ, սակայն հիմնական խնդիրը ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխումն է, ինչ գյուղերում առաջացնում է ջրամատակարարման պակաս: Ախալքալաքի մունիցիպալիտետը 18 կմ հեռավորության վրա սահմանակցում է Կուր գետի արեւմտյան ափին, իսկ հյուսիսից՝ Փարվանա գետին: Այն հոսում է մունիցիպալիտետի կենտրոնական մասով եւ Խերթվիս գյուղի (Ասպինձայի շրջան) մոտակայքում միանում Փարվանա գետին: Փարվանա գետի հարավային մասով անցնում է Մուրջախեթի ջուրը: Լճերից նշանավոր է Չրեսը, Խոզափինը(Կարծախ): Փարվանա գետը սնվում է Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փարվանա լճից: Մունիցիպալիտետի գետերն են՝ Փարվանա, Չոբարեթ եւ Բարալեթ: Իսկ լճերը՝ Աբուլ, Վաչիան, Լեվանի, Պասկիա(Չրես), Տաբաժուրի, Խոզափին(Կարծախ) եւ Սուլդա: Գետերը եւ լճերը օգտագործում են Էներգետիկայի եւ ոռոգման նպատակով, նաեւ անասնապահության համար: Տարածաշրջանը զգալի քանակությամբ խմելու ջրի պաշարներ ունի Աբլարի, Բեժանոյի, Իխտիլայի, Օկամի եւ Դիլիֆի աղբյուրներից, նաեւ մեծ եւ փոքր լճերից: Բարալեթի հովտում, ինչպես նաեւ Վաչիանում, Օկամում, Սուլդայում, Կարծախում, Աբուլում եւ որոշ այլ գյուղերում հանդիպում ենք ճահճոտ տեղերի: Հատկանշական է, որ լճերը եւ գետերը աչքի է ընկնում ձկների բազմազանությամբ:

### ***Ընդերք***

Ախալքալաքի մունիցիպալիտետը հարուստ է ընդերքի բազմազանությամբ: Օգտակար հանածոներից հատկանշական է բազալտյա ապարները: Գոյություն ունի բավարար քանակությամբ շինարարական նյութերի արտադրամասեր

Ազավրեթ գյուղում՝ կրաքար (գոյություն ունեցող ռեսուրսը կազմում է մոտ 554 հազար մ<sup>3</sup>), Չակ գյուղում՝ հրաբխային խարմ, Սուլդա եւ Օկամ գյուղերում՝ պեմզա, Չոբարեթի մասիվում՝ մարմար, պեռլիտ եւ տուֆ:

### **3.8 Տեղական ենթակառուցվածք**

#### ***Էներգիայի մատակարարման***

Ախալքալաքի մունիցիպալիտետում Էլեկտրական Էներգիան մատակարարում է «Էներգո-պրո ջորջի-ան»։ Մունիցիպալիտետում մոտավորապես 16000 բաժանորդ է հաշվառված։ Մունիցիպալիտետում Էլեկտրական Էներգիան մատակարարման խնդիր գոյություն չունի։ Բարձրլեռնային շրջանում բնակվող բնակչությունը Էլեկտրական Էներգիայի սպառման համար ստանում է սուբսիդիա, մասնավորապես՝ ընտանիքները մինչեւ 100 կվտ սպառված Էլեկտրական Էներգիայի համար ստանում են 50%-անոց սուբսիդիա:

#### ***Բնական գազ***

Ախալքալաքի մունիցիպալիտետում գործում է միայն մեկ գազամատակարարման ընկերություն՝ "SGGas Company", ընկերությունը ունի 10 729 հաշվառված բաժանորդ։ Բնական գազով մատակարարվում է Ախալքալաքի համայնքի մի մասը։ Քաղաքից դուրս բնական գազով մատակարարվում է 42 գյուղ, ինչը ամբողջ գյուղերի (64) 66%-ն է կազմում:

#### ***Խմելու ջուր***

Վրաստանի միավորված ջրամատակարարման ընկերությունը ծառայում է Ախալքալաքին եւ 38 գյուղերի: 2017 թվականի համար մունիցիպալիտետի 90%-ը ապահովված է ջրամատակարարմամբ: Ջրախողովակների 70% ունի վերանորոգման կարիք: Ջրախողովակների վերանորոգումը կապված է ճանապարհային ենթակառուցվածքի զարգացման գործընթացի հետ: 2016 թվականին 14 փողոցներում փոխվեց խողովակները: Ջրամատակարարման վճարը ամսական կազմում է 0.25 լարի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, իսկ իրավաբանական անձանց համար վճարը բարձր է եւ կազմում 1 մ<sup>3</sup>-ը 4.31 լարի: Ջրամատակարարման համակարգի մեջ է մտնում 24 հիմնական ջրի խողովակ, ընդհանուր երկարությունը 216 կմ.: Ջրի խողովակները հիմնականում պատրաստված են՝ պողպատից, երկաթից եւ ասբեստից: Նշված ջրի աղբյուրներից բացի, Մոդեգամ, Բուռնաշեթ, Ազավրեթ, Գոկիո, Ալաստան, Չակ, Բալխո, Մերենիա, Մեծ Սամսար, Փոքր Սամսար գյուղերում խմելու ջուրը մատակարարվում է տեղական աղբյուրներից: Քաղաքի ջրամատակարարման համակարգը բաղկացած է 11 կմ ջրի խողովակաշարի 4 գծից: Խողովակները հիմնականում երկաթյա եւ պողպատյա են: Խմելու ջուր չի մատակարարվում մի քանի գյուղերի (օր. Սուլդաին եւ Դադեշին): Ամռանը ջրամատակարարումը նվազում է, քանի որ ֆերմերները խմելու ջուր օգտագործում են ոռոգման նպատակով: Խմելու ջրի ռեզերվուարները չեն ֆիլտրացվում եւ պատշաճ ֆիլտրացման համակարգի կարիք ունի, քանի որ բնակչությունը կեղտոտ եւ աղտոտված ջուր է սպառում:

#### ***Կոյուղու համակարգ եւ թափոնների հավաքում***

Տեղական սանիտարական ծառայությունը պատկանում է տեղական ինքնակառավարմանը, որը ֆինանսավորվում է տեղական բյուջեից: Բյուջեի մի

մասը լցվում է տեղական մատուցած ծառայության եկամուտներով, սակայն այս գումարը չնչին է: Մունիցիպալիտետի սեփականության մեջ գտնվող ընկերությունում նկատվում է աղբ հավաքող մեքենաների եւ աղբարկրերի պակաս: Ճանապարհները ծայրաստիճան վնասված են, ինչը բարձրացնում է բեռնատար մեքենաների պահեստավորման ծախսերը: Աղբանոցը գտնվում է Նինոծմինդայի մունիցիպալիտետի մոտակայքում, սակայն թափոնները չեն տեսակավորվում: Առայժմ ֆերմերները չեն կարող վերամշակել ագրո-քիմիական թափոնները եւ այդ իսկ պատճառով թափոնները թողնում են իրենց հողամասում: Ընկերությունը չունի հատուկ տեխնիկա վտանգավոր թափոնների համար: Բացի դրանից ագրո-քիմիական թափոնները լցնում են աղբանոց: Գյուղերը չունեն կոյուղու համակարգ եւ թափոնների հավաքման համար սահմանված վայրեր, ինչը ստեղծում է սանիտարակն եւ էկոլոգիական խնդիրներ:

### **Ճանապարհներ**

Ախալքալաքի մունիցիպալիտետում ճանապարհային ցանցի երկարությունը մոտավորապես 410 կմ է կազմում: Դրա մեջ է մտնում միջազգային նշանակություն ունեցող 42 կիլոմետրանոց Ախալքալաք-Հայաստան սահմանային ճանապարհը եւ 34 կիլոմետրանոց Ախալքալաք-Կարծախ ճանապարհը մինչեւ Թուրքիայի սահմանը: Ճանապարհները ասֆալտապատված են: Հարկ է նշել որ Ախալքալաք-Բակուրիան ճանապարհին, որը մոտավորապես 30 կմ է, առայժմ ընթանում է վերանորոգման աշխատանքներ: Ճանապարհների հիմնական արտերիան՝ Ախալքալաք-Ախալցխա ճանապարհը ամբողջովին պատված է ասֆալտով եւ բետոնով: Նաեւ ամբողջովին վերանորոգված է Մարաբդա-Ճակա-Ախալքալաքի ճանապարհային մայրուղին: Տեղական ճանապարհների ընդհանուր երկարությունը 220 կմ է: Գյուղերի հետ կապող ճանապարհների երկարությունը կազմում է 90 կմ հիմնականում ասֆալտապատված չեն: Ըստ առկա դրության, 2017 թվականին տեղի ունեցավ տեղական նշանակության ճանապարհների վերանորոգում, որը ներառեց հետեւյալ գյուղերը՝ Կումդոդո, Կարծախ, Բավրա, Դիլիսկա, Կոթելիա եւ Բարալեթ: Մունիցիպալիտետի որոշ մասերում ընթանում է ճանապարհների շինարարական եւ վերանորոգման աշխատանքներ:

### **Տեղական տրանսպորտ**

Ախալքալաքի մունիցիպալիտետում ավտոկայանին սապարկում է «Ավտոտրանս կուլդա» ՍՊԸ-ն, որը փոխադրում է ուղեորներին քաղաքից, մունիցիպալիտետեց եւ հանրապետությունից դուրս: Տրանսպորտային միջոցների ամբողջ մասը պատկանում է մասնավոր ուղորտին: Մունիցիպալիտետում չկա հասարակական տրանսպորտ: Ավտոկայանը գտնվում է Ախալքալաքի ելքի մոտ: Մունիցիպալիտետում կան դեպի գյուղեր ընթացող ավտոբուսներ, միկրոավտոբուսներ եւ անհատ տաքսիներ: Տրանսպորտը աշխատում է հետեւյալ ուղղություններով՝ Ախալքալաք-Թբիլիսի, Ախալքալաք-Բաթում, Ախալքալաք-Ախալցխա եւ Ախալքալաք-Երեւան: Տրանսպորտային ծառայությունը գյուղերի ուղղությամբ սեզոնային է, քանի որ կլիմայական պայմանները թույլ չեն տալիս ճանապարհորդել ձմռանը: Հարկ է նշել Մարաբդա-Ախալքալաքի երկաթուղու (Պետական սեփականություն) նշանակության մասին, քանի որ այն տալիս է տարածաշրջանից հանքային ջրերի արտահանման հնարավորություն եւ կարող է նպաստել շրջանի սոցոալ-տնտեսական զարգացման գործընթացին: Այսօրվա դրությամբ այս ճանապարհը բեռնված չէ պատշաճորեն: Այն ձմռվա ընթացքում

փակվում է, իսկ ամռանը հնարավոր է ուղեւորների որոշ մասի եւ բեռի փոխադրում: Դրա հետ մեկ հարկ է նշել, որ Ախալքալաքի Մուկիցիպալիտետի տրածքով կանցնի Բաքո-Թբիլիսի-Կարս երկաթուղին:

### ***Հաղորդակցություն (հեռուստատեսություն եւ ռադիո, համցամաց, բջջային կապ)***

Մուկիցիպալիտետում կա բջջային կապի երեք օպերատորներ՝ Մագթիկոմ, Ջեոսել եւ Բիլաին: Բ. Ախալքալաքում Սիլքետթը եւ Մագթիկոմը սկսեցին հաղորդել կաբելային հեռուստատեսություն եւ օպտիկամանրաթելային ինտերնետ: Նշված մատակարարները մասնավոր ընկերություններ են: Մուկիցիպալիտետը ունի առցանց տեղեկատվական պորտալ՝ «Jnews.ge»: Ախալքալաքի մուկիցիպալիտետը ծածկում է հետեւյալ տեղական հեռուստատեսությունները՝ "ATV 12" եւ "Փարվանա" եւ ռադիոկայանները: Բոլոր ծրագրերը հաղորդվում է հայերեն լեզվով: Հատկանշական է այն փաստը, որ գյուղերում ազգային ակիբների հեռարձակումը (ծածկույթը) թույլ է եւ նվազ դիտելի:

### ***3.9 Տնտեսական զարգացում***

#### ***3.9.1 Տնտեսական գործունեության պրոֆիլ***

Ախալքալաքի մուկիցիպալիտետում հաշվառված է 523 ընկերություն հետեւյալ ոլորտներում՝ մանրածախ առեւտուր, շինարարություն; մեծածախ առեւտուր, սննդի արտադրություն, ֆինանսական ծառայություններ, գյուղատնտեսություն, սննդի սպասարկում, առողջապահություն (ներառյալ դեղատուն եւ ատամնաբուժություն), այլ ծառայություններ, ինչպիսիք են գեղեցկության սրահները, նոտարական ծառայություններ, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում (վերանորոգում, լվացում եւ այլն); հեռախոսների վերանորոգման եւ IT աջակցություն, հաշվապահական ծառայություններ, արտադրություն, հյուրանոցներ, կրթություն, էներգետիկա, հաղորդակցություն, ազարտային խաղեր, գվարճանք եւ հանգիստ, տրանսպորտ, շինարարական եւ վերանորոգման ծառայություններ եւ այլն: Ներքեւում բերված սխեման ցուց է տալիս, որ ավելի մեծ համամասնությունը՝ 65%-ը (340 բիզնես սուբյեկտ) կազմում է մանրածախ առեւտուրը, որոնց մեծ մասը ներկայացված են որպես փոքր ձեռնարկություններ: Գյուղատնտեսությունը մուկիցիպալիտետում գրանցված ձեռնարկությունների 3%-ն է կազմում (15 բիզնես սուբյեկտ): Սակայն այս ցուցանիշը ներառում է միայն գրանցված ընկերությունները եւ ոչ ինքնագրաված ֆերմերներին, ովքեր մուտքագրված չեն հանրային ռեստորի տվյալների բազայում: Չնայած դրան, նրանք կարելի էր են խաղում տեղական տնտեսական գործունեության մեջ:



հավելված 1\_Ախալքալաքի LDS զարգացման համար համյանքի խնդիրների եւ կարիքների հետազոտության  
հիմնական ամփոփում

առեւտրականները) որոշ ապրանքներ պարբերաբար գնում են Թբիլիսիից: Քաղաք Ախալքալաքում կան շուկաներ, խանութներ եւ խցիկներ, սակայն փոքր խանութներում ընտրությունը ցածր է սպառողների ցածր պահանջարկի պատճառով:

### **3.9.2 Գյուղատնտեսություն**

Մունիցիպալիտետում բնակվող բնակչության մեծ մասը գյուղատնտեսական գործունեության մեջ է ընդգրկված: Գյուղատնտեսությունը մունիցիպալիտետի տնտեսությունում մեծ դեր է խաղում: Գյուղերում ընտանիքների 100%-ը ունեն վարելահողեր եւ ընդգրկված են գյուղատնտեսական արտադրության մեջ՝ առնավազն կենսաապահովման մակարդակով: Առաջատար գյուղատնտեսական գործունեություններից է բանջարեղեն աճեցնելը (հիմնականում կարտոֆիլաբուծություն), որից հետո գալիս է անասնապահությունը՝ հիմնականում խոշոր եղջերավոր կենդանիների բազմացում, մեղվապահություն եւ ձկնաբուծություն: Կլիմայական պայմանները թույլ չեն տալիս արտադրել բազմազան տեսակի գյուղատնտեսական մթերք, սակայն մրգերի տեսակներից աճում է՝ խնձոր, տանձ, կեռաս, մասուր, ինչպես նաեւ տարբեր հատապտուղներ եւ ընկույզ: Ինչը վերաբերում է այգեգործությանը եւ բանջարաբուծությանը գոյությունի ունի բազուկի, սխտորի, սոխի, կաղամբի, լոբիի, շաղկամի եւ գազարի աճեցման պոտենցիալ: Ֆերմերները աճեցնում են նաեւ գարու, վարսակի եւ ցորենի կուլտուրաներ, սակայն դրանց բերքը համաեմատաբար ցածր է:

Գյուղատնտեսության արտադրողականությունը ցածր է: Վերջին տարիներին կուլտուրաների մեծ մասի բերքատվությունը փոքր-ինչ աճել է, որի պատճառն է՝ փոքր տնտեսությունները; Կոոպերատիվների անբավարար փորձը եւ ֆերմերների բացասական վերաբերմունքը համագործակցության եւ ընդհանուր գործունեության հանդեպ՝ գյուղատնտեսական արտադրության, վերամշակման եւ մարկետինգի ոլորտում, բարելավված եւ բարձր բերքատվությամբ տեսակների եւ նոր տեխնոլոգիաների ոչ պատշաճ կիրառումը, ինչը հարկավոր է մթերքի նույնականացման եւ դիվերսիֆիկացիայի համար, Գյուղատնտեսական ռեսուրսների անբավարար որակը, ինչպիսիք են պարարտանյութերը, ոչ բավարար ոռոգումը եւ տեխնիկայի կիրառման ցածր ցուցանիշը: Դրա հետ մեկտեղ այն գործոնները, որոնք կնպաստեն կապերի հաստատմանը ֆերմերների եւ շուկաների միջեւ, օրինակ՝ գյուղատնտեսական հետազոտությունները, տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունները եւ պետության ուղղակի ծախսերը դեռեւս չեն ֆինանսավորվում բավական չափով:

Չարգացման հնարավորությունները - Տեղական համայնքի անասնապահերը ընդգծեցին հետեւյալ ագրոբիզնեսների զարգացման նշանակությունը առջնային արտադրության առումով - կարտոֆիլ աճեցնելուց բացի կա այգեգործության եւ էներգաարդյունավետ ջերմոցների զարգացման հնարավորություն: Որոշ համայնքներ ունեն ձկնաբուծության պոտենցիալ որը պայմանավորված է յուրահատուկ ջրով եւ Էկոլոգիական գործոններով:

Եկրորդական արտադրության եւ արժեքային շղթայի զարգացման տեսանկյունով կա բազուկի շաքարավազի արտադրման հնարավորություն, ինչպես նաեւ կարտոֆիլից խմիչքներ եւ սպիրտի արտադրման հնարավորություն, կենդանիների համար կեր արտադրելուց բացի, նաեւ կա չափանիշների պահպանման համապատասխան սպանդանոց կառուցելու հնարավորություն: Բացի դրանից հարցվողները նշեցին կարտոֆիլի վերամշակման եւ պահեստավորման օբյեկտների կառուցման անհրաժեշտությունը:

### **3.9.3 2բոսաշրջությունն եւ ռեկրեացիա**

Ախալքալաքի մունիցիպալիտետը գտնվում ալայան գոտում՝ Կովկասյան լեռնաշղթայի հրաբխային բարձրավանդակի վրա (ծովի մակարդակից 1500-ից 3300 մետր բարձրության վրա): Բարձրավանդակի մակերեսը ներկայացված է ալիքավոր լեռնաշղթաներով: Արեւելյան մասում գտնվում է Սամսարի լեռնաշղթան, որի բարձրագույն կետն է Աբուլ լեռը (ծովի մակարդակից 3304 մ): Բարձր լեռնային լանջերը, 2200-2600մ միջին բարձրության վրա, ծածկված է ենթալայան բույսերով, որոնք օգտագործվում են որպես ամառային արոտավայրեր: Այս գոտին արեւոտ է եւ հանգստավայրի զարգացման համար տեղը բարենպաստ է:

Տարածաշրջանի զբոսաշրջային ենթակառուցվածքը չունի բնակատեղեր զբոսաշրջիկների համար՝ քեմփինգի վայրեր, ընտանեկան հյուրանոցներ, հյուրանոցներ: Քաղաքում չկա տուրօպերատորներ: Հյուրերի համար սահմանափակված է 2բոսաշրջային տեղեկատվության մատչելիությունը: Գույություն չունի կազմակերպված զբոսաշրջային երթուղիներ, ուղղություններ, երթուղային քարտզներ, նշաններ ու տեղեկատվական աղբյուրներ: Չնայած մունիցիպալիտետի պոտենցիալին՝ զարգացնել զբոսաշրջային ապրանքները, տեսարժան վայրերը, ծառայությունները եւ ենթակառուցվածքը, նաեւ անհրաժեշտ մունիցիպալիտետի մարքեթինգային աջակցություն եւ հանրաճանաչություն: 2բոսաշրջային սեզոնը սկսվում է ապրիլին եւ շարունակվում մինչեւ նոյեմբեր:

Մունիցիպալիտետի մեջ է մտնում Ջավախեթիի ազգային զբոսայգին եւ Կարծալի, Սուլդայի, Թեթրոբիի եւ Տաբաթուրիի ազգային արգելանոցները: Ազգային զբոսայգին հյուրընկալում է տեղի եւ միջազգային զբոսաշրջիկներին, արշավողներին, ձկնորսներին եւ օրնիտոլոգներին: Պահպանվող տարածքների գործակալությունում կա այցելուների կենտրոն, կոնֆերանս-սրահ, տեխնիկա, ունի պրոֆեսիոնալ ռեինջերներ եւ ունի մի քանի հյուրատուն: Ջավախեթիի պահպանվող տարածքների հյուրերը կարող են ստանալ հետեւյալ ծառայությունները՝ թռչունների դիտարկում (համապատասխան կահավորում), ձկնորսություն, ձիարշավ, 15 մարդու համար հատկացված պիկնիկի տարածք, կրակ վառելու վայրեր իր աղբամաններով, փարկինգը անվճար է: Պահպանվող տարածքների գործակալությունը առաջարկում է մի քանի երթուղի՝ Խանչալիի լիճ, Մադադափիի լիճ, Բուղաշենի լիճ, Սուլդայի ճահճոտ արգելանոցը, Կրծանիսիի ճահճոտ արգելանոցը, Կարծախիի ճահճոտ արգելանոցը, Մադադափիի լեռը, Վագրի կիրճ: Լրիվ տեղեկությունը հասանելի է՝ <http://www.apa.gov.ge/en/ecotourism/servisebi-da-tarifebi/djavaxetis-daculi-teritoriebi> եւ [http://mygeorgia.ge/Default.aspx?map=Apa\\_Geoland\\_Physycal](http://mygeorgia.ge/Default.aspx?map=Apa_Geoland_Physycal) վեբ-կայքերին:

Մունիցիպալիտետ հպարտանում է մշակութային ժառանգությամբ, որը ներառում է՝ Ախալքալաքի ամրոցը, Աբուլի ամրոցը, Կուսուրդոյի գմբեթավոր տաճարը, Սամսարի քարանձավները, Չունչխայի հնագույն բնակավայրը եւ տները, Վանքի տաճարը, Ալաստանի եկեղիցին, Ագավրեթի եկեղեցին, Բուռնաշեթի եկեղեցին, Կոճիոի եկեղեցին եւ այլն:

### **3.9.4 Արտադրություն եւ վերամշակում**

Մունիցիպալիտետի արտադրության հիմնական ոլորտն է հանքաքարերի վերամշակումը եւ արտադրությունը: Նրանք արտադրում են տարբեր տեսակի բազալտի սալիկներ, որոնք հիմնականում օգտագործում են մայրերի բարեկարգման համար: Բազալտի քարեր արտադրողները հիմնականում փոքր ձեռնարկություններ են: Ավելի մեծ ընկերությունները արտադրում են մանրախիճ, ավազ եւ պեմզա՝ շինարարական նպատակներով: Տեղական շուկայում կան զովացուցիչ խմիչքների արտադրման միսի-գործարաններ: Ախալքալաքում գործում է կարագի գործարան եւ հրուշակեղենի արտադրման ընկերություն՝ «Ալպենմիլկ»-ը, որը արտադրում է ապրանքը տեղում եւ վաճառում ինչպես ամբողջ երկրի մասշտաբով՝ այնպես էլ Վրաստանից դուրս: Տեղական գարեջրի գործարանը՝ «Բալլիս»-ը մի քանի տարի առաջ փակվեց: Ներդրումների դեպքում կա հանքային ջրերի արտադրման պոտենցիալ: Ընդհամրապես, գոյություն ունի սննդի եւ խմիչքների արտադրման պոտենցիալ(օրինակ: գարեջուր, հրուշակեղեն, պանիր, միս, հաց, փակոցներ, մուրաբաներ եւ այլն), որում մեծ դեր կխաղա տեղական ավանդույթները, էթնոգրաֆիական պատրաստման ձեւերը, մշակույթի կամ բաղադրատոմսերի վերականգնումը: Ագրո-սննդամթերքային ապրանքի արտադրման հետ կապված տեղեկություն ստանալու համար տեսնել՝ հավելված 7-ը

#### 4. Սեկտորային ամփոփում եւ ապագա զարգացման մարտահրավերները

Մանրամասն SWOT վերլուծությունը, որպես խորհրդատվական գործընթացի գլխավոր մաս, անցկարեց երեք կողմանի ուղղություններով (տնտեսական, սոցիալական եւ էկոլոգիական) եւ ներկայացված է հետեւյալ տսքով՝

| Տնտեսություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| S                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          | W                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
| <ul style="list-style-type: none"> <li>Աշխարհագրական դիրքը հարեւան երկրների՝ Հայաստանի եւ Թուրքիայի հետ</li> <li>Միջազգային ճանապարհային կապ</li> <li>Բարենպաստ ալպյան կլիմայական պայմաններ տարբեր կուլտուրաներ աճեցնելու համար (կարտոֆիլ, գազար, բազուկ եւ այլն, ալպյան մարգագետինները մեղվապահության եւ անասնապահության համար:</li> <li>Սառը կլիմա, որը խանգարում է բազում հիվանդությունների եւ վիրուսների տարածմանը</li> <li>Բնական ռեսուրսներ՝ բերքատու հող, բազալտ, պեմզա, կրաքար, մարմար, խճաքար, ջրային ռեսուրսներ (հանքային ջուր, գետեր եւ լճեր)</li> <li>Ձեռնարկատիրության վրա կենտրոնացված բնակչություն</li> <li>Հասանելի ագր-ապահովագրում</li> <li>Ագրո-վարկերի պետական աջակցություն</li> <li>Համագործակցության փորձ</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>Խիստ եւ երկար ճամնային ժամանակաշրջան</li> <li>Վատ ենթակառուցվածք գյուղերում</li> <li>Տեղական շուկայական մթերքի որակի թույլ վերահսկում, հատկապես սննդամթերքի անվտանգության</li> <li>Նորարարությունների պակաս բիզնեսում</li> <li>Երիտասարդների թույլ ակտիվություն բիզնես գործունեության մեջ</li> <li>Որակավորված մասնագետների/կադրերի պակաս</li> <li>Գյուղատնտեսությունում թույլ մրցակցություն, մարկետինգ եւ վաճառք</li> <li>Թույլ տնտեսական համագործակցություն բիզնեսով զբաղվողների միջեւ</li> <li>Փոքր չափի, չգրանցված եւ ֆրագմենտային հողամասեր</li> <li>Գյուղատնտեսական ենթակառուցվածքի, տեխնոլոգիաների պակաս (ոռոգում, պահեստ, սարքավորումներ եւ այլն)</li> <li>Թույլ հեռահաղորդակցության</li> </ul> |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>գյուղատնտեսության մեջ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Միջազգային դոնորների լայն աջակցություն</li> <li>• Բարձրլեռնային շրջանների մաքսային արտոնություններ</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           | <p>ենթակառուցվածք</p> <ul style="list-style-type: none"> <li>• Արտավայրերի թույլ կառավարում</li> <li>• Գոյություն չունի աշխատանքի դիվերսիֆիկացում տարբեր սեկտորներում</li> <li>• Անտառային գոտիների եւ այգիների բացակայություն</li> <li>• Ագրովարկերի սահմանափակ մատչելիություն</li> </ul>                                                                                                                                                        |
| <p><b>Օ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կապը արտահանման շուկայի հետ եւ ապրանքաշրջանառության աճ</li> <li>• Արտադրության եւ արդյունաբերության աճ</li> <li>• Գյուղատնտեսակն ապրանքների վերմշակում (այդ թվում, բժշկական գիտության)</li> <li>• Մսի, կաթի, ձկնի եւ մեղրի արտադրության բարելավում, այդ թվում տեսակների բարելավում</li> <li>• Վերականգնվող էներգիայի կիրառում</li> <li>• Միջազգային կապեր (Չինաստանի եւ Եվրոպայի հետ)</li> <li>• Ագրոգրոսաշրջության եւ զբոսաշրջության զարգացում</li> <li>• Հողային ռեսուրսներ ռացիոնալ օգտագործում</li> <li>• Ներդրումների ներգրավում եւ նորարարությունների աջակցում</li> <li>• Նորարարական եւ ժամանակակից տեխնոլոգիաների մատչելիությունը</li> </ul> | <p><b>Դ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսական (տարադարամի) անկայունություն</li> <li>• Քաղաքացիական եւ հաճախակի օրենսդրության փոփոխումներ</li> <li>• Խիստ կլիմայական պայմաններ (սառնամանիք, կարկուտ, ձյուն եւ երաշտ)</li> <li>• Նոր հիվանդություններ, միջատներ եւ կրծողներ</li> <li>• Ընդերքի էրոզիա</li> <li>• Ջրի աղտոտում</li> <li>• Գլոբալ տաքացում</li> <li>• Բնական աղետներ</li> <li>• Բնակչության ծերացում</li> </ul> |

| <b>Սոցիալական</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p><b>Տ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կրթական ծրագրի մատչելիությունը 4 + 1</li> <li>• Հրավիրված ուսուցիչներ դպրոցներում</li> <li>• Վերանորոգված հիվանդանոց եւ համընդհանուր բժշկական ապահովագրություն</li> <li>• Ուսուցիչների եւ բժշկական անձակազմի մեծամասնությունը կանայք են</li> <li>• Ենթակառուցվածքային նախագծեր (ճանապարհներ, մանկապարտեզներ, դպրոցներ եւ այլն ) ամեն տարի իրագործվում են</li> <li>• Անվճար հանրային կրթություն</li> <li>• Նյութատեխնիկական բազա կրթության ոլորտում</li> </ul> | <p><b>Վ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Թույլ սոցիալական ինտեգրում եւ բարեկեցություն</li> <li>• Անբավարար բժշկական անձնակազմ</li> <li>• Հասարակության թույլ իրազեկություն ծառայությունների եւ սոցիալական արտոնությունների վերաբերյալ</li> <li>• Կանանց թույլ ակտիվությունը եւ տեղական ինքնակառավարությունում ներկայացուցիչների պակաս</li> <li>• Պետական լեզվի անտեսում (վրացերեն) փոքրամասնություններում</li> <li>• Թույլ զարգացած տեղական ոչ պետական կազմակերպությունների համագործակցություն եւ ֆինանսական աջակցություն</li> <li>• Տեղական բնակչության ցածր</li> </ul> |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <ul style="list-style-type: none"> <li>• Կրթական ոլորտում ֆինանսավորման դինամիկ աճ</li> <li>• Անվճար բժշկական ապահովագրություն</li> <li>• Կենտրոնական հիվանդանոցի առկայություն</li> <li>• Շտապ օգնության առկայություն (3 անձնակազմ)</li> <li>• Ընթացիկ ռեֆորմները տեղական ինքնակառավարման ոլորտում</li> <li>• Մունիցիպալիտետի սեփականությունում առկա որոշակի գույք</li> <li>• Տեղական ինքնակառավարման բյուջեի դինամիկ աճ</li> <li>• Նոր մունիցիպալիտետային նախագծերի իրագործում</li> <li>• Տեղական ոչ պետական կազմակերպությունների առկայություն եւ իրազեկություն</li> <li>• Ոչ պետական կազմակերպություններում աշխատող պրոֆեսիոնալներ</li> </ul>                                                                                                                                                                            | <p>մոտիվացիա մասնակցել (ներկայություն) մունիցիպալիտետի բյուջեի պլանավորման եւ բաշխման գործընթացին</p> <ul style="list-style-type: none"> <li>• Որակավորված ուսուցիչների պակաս</li> <li>• Թույլ ենթակառուցվածք կրթության համակարգում</li> <li>• Ժամանակակից մասնագիտական եւ ոչ ֆորմալ կրթության բացակայություն</li> <li>• Գենդերային հավասարություն, երիտասարդություն եւ կանանց ներգրավվածություն</li> <li>• Թերի զարգացած սպորտային եւ հանգստի միջոցառումներ</li> <li>• Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների թույլ մրցունակություն</li> <li>• Ֆերմերների անբավարար գիտելիքները նոր տեխնոլոգիաների կիրառման համար</li> </ul> |
| <p style="text-align: center;"><b>Օ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնակչության սոցիալական ինտեգրում</li> <li>• Մասնագիտական եւ ոչ ֆորմալ կրթություն</li> <li>• Պետական եւ միջազգային լեզուների իմացություն</li> <li>• Առողջապահության ծառայության բարելավում</li> <li>• Սպորտի եւ հանգստի ենթակառուցվածքի զարգացում</li> <li>• Գենդերի եւ երիտասարդության եւ ներգրավվածությունը տեղական ժողովրդագրական հարցերում</li> <li>• Լրացուցիչ ֆինանսավորման եւ ներդրումների ներգրավում</li> <li>• Համայնքի վրա հիմնված տեղական զարգացում</li> <li>• Տեղական մշակույթի գնահատում եւ ճանաչում</li> <li>• Քաղաքացիական ծառայությունների զարգացում</li> <li>• Տեղական լրատվամիջոցների հզորացում</li> <li>• Տեղական ոչ պետական կազմակերպությունների զարգացում</li> <li>• Երիտասարդական ակումբների ստեղծում</li> </ul> | <p style="text-align: center;"><b>Դ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնակչության միգրացիա, (հատկապես երիտասարդների)</li> <li>• Վաղ ամուսնություն</li> <li>• Պետական լեզվի անտեսում</li> <li>• Քաղաքացիական անկայունություն</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |

## Չբոսաշրջություն, մշակույթ, գվարճանք եւ ռեկրեացիա

| Տ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | Վ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <ul style="list-style-type: none"> <li>• Աշխարհագրական դիրք</li> <li>• Բնական ռեսուրսներ (գետեր, լճեր, ալպյան մարգագետիններ եւ լեռներ)</li> <li>• Վրաց եւ հայկական մշակութային բազմազանություն եւ ժառանգություն</li> <li>• Մշակութային օբյեկտներ, տեսարժան վայրեր (ՅուՆԵՍԿՕ-յան, պատմական հարստություն եւ ժառանգություն)</li> <li>• Ալպյան ֆլորա եւ ֆաունա</li> <li>• Ազգային այգի եւ պահպանվող տարածքներ, հանգիստ վայրի բնության մեջ</li> <li>• Ազգային խոհանոցի եւ էթնիկ մշակույթի խայտաբղետություն</li> <li>• Այցելուների համար անվտանգ եւ պահպանվող վայրեր</li> </ul>                                                                                                                                                           | <ul style="list-style-type: none"> <li>• Անբավարար փորձ եւ ունակություններ (անձնակազմ) զբոսաշրջության եւ ծառայության ոլորտում</li> <li>• Չբոսաշրջիկների եւ այցելուների պակաս</li> <li>• Չբոսաշրջության եւ նրա հետ կապված ծառայության ենթակառուցվածքի թերզարգացվածություն</li> <li>• Ծառայության օբյեկտների, ռեկրեացիոն օբյեկտների, տեսարժան վայրերի եւ մշակութային միջոցառումների պակաս (ՅուՆԵՍԿՕ-յան, սրճարաններ, ռեստորաններ եւ այլն)</li> <li>• Ներքին զբոսաշրջության բացակայություն</li> <li>• Հաղորդակցության պակաս զբոսաշրջային գործակալությունների հետ</li> <li>• Ուղղեկցող գիդերի պակաս</li> <li>• Թույլ հանրաճանաչություն, գովազդային եւ տեղեկատվական աջակցություն (քարտեզներ, հանգստի վայրեր, երթուղիներ եւ այլն)</li> <li>• Երիտասարդական ծրագրերի պակաս</li> <li>• Գոյություն չունի փորձի փոխանակում այլ տարածաշրջանների հետ ազգային եւ միջազգային մակարդակով</li> </ul> |
| Օ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | Դ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
| <ul style="list-style-type: none"> <li>• Չբոսաշրջային տեղեկատվական բազայի ստեղծում</li> <li>• Գովազդ եւ մարկետինգ (բանեերներ, թռուցիկներ, տեսանյութեր եւ այլն)</li> <li>• Չբոսաշրջային երթուղիների ստեղծում, հանգստի վայրեր, տեսարժան վայրերի զարգացում եւ մշակութային միջոցառումների կազմակերպում</li> <li>• Տեղական մշակույթի գնահատում եւ ճանչման բարձրացում</li> <li>• Գյուղերում ենթակառուցվածքի զարգացում</li> <li>• Չբոսաշրջային ենթակառուցվածքի եւ ծառայության որակի բարելավում</li> <li>• Էկո եւ արկածային զբոսաշրջության բարելավում</li> <li>• Կրթություն՝ զբոսաշրջության եւ ծառայության ոլորտում</li> <li>• Ձմեռային զբոսաշրջության զարգացում</li> <li>• Մասնակցություն ազգային եւ միջազգային միջոցառումներին</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• Մրցակցություն զբոսաշրջության ոլորտում Վրաստանի տարբեր շրջանների հետ</li> <li>• Միջավայրի աղտոտում</li> <li>• Կլիմայի փոփոխություն</li> <li>• Բնական աղետներ</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |

|                                                      |  |
|------------------------------------------------------|--|
| • Մշակութային ժառանգության վերականգման պահպանություն |  |
|------------------------------------------------------|--|

